



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am,
hetq@hetq.am, URL : www.hetq.am

25.01.2021թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն Համբարձում Մաթևոսյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն *Մաթևոսյան*

«Հետք» էլեկտրոնային թերթը 18.01.2021թ. էլեկտրոնային փոստով հարցում էր ուղարկել Արմավիրի մարզպետին՝ սուրվենցիոն ծրագրերի վերաբերյալ: 22.01.2021թ. ստացվել է պատասխանը, որը թերի է:

Մասնավորապես՝ խնդրել էինք տրամադրել տեղեկություններ, թե **2020թ. որ համայնքներում չեն իրականացվել արդեն հաստատված սուրվենցիոն ծրագրերը և ինչ պատճառով: Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով ծրագրի նկարագրության, համայնքի և պետության մասնակցության մասին տեղեկություններ՝ առանձին-առանձին:**

Այս հարցի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի փոխանցվել: Մարզպետարանի պատասխանում չեն նշվել այն համայնքները, որտեղ ինչ-ինչ պատճառներով (օրինակ՝ կորոնավիրուս, ֆինանսական միջոցների բացակայություն, պատերազմ և այլն) չեն իրականացվել սուրվենցիոն ծրագրերը, չեն նշվել, թե ինչ բնույթի ծրագրեր չեն իրականացվել (օրինակ՝ լուսավորություն, ջրագծի փոխում և այլն): Չեն նշվել նաև այդ համայնքներում չիրականացված ծրագրերի մասով պետության, համայնքի ֆինանսական մասնաբաժնի չափը, որը իրականանալու դեպքում կհատկացվեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածները, խնդրում եմ տրամադրել տեղեկություններ վերը նշված հարցերի վերաբերյալ:

Գանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան